ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

1899 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ ԵՎ 1907 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՀԱԱԳԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 3 դեկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Ե. Կիրակոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի նոյեմբերի 7-ի N 1735-Ա որոշմամբ հավանություն է տվել «1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաները վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի նոյեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիաները, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաները (այսուհետ՝ 1899 թ. Կոնվենցիա, 1907 թ. Կոնվենցիա, միասին՝ Կոնվենցիաներ) ընդունվել են համապատասխանաբար՝ 1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում՝ պետությունների միջև հարաբերություններում ուժի կիրառումը կանխելու նպատակով:

Համաձայն 1899 թ. Կոնվենցիայի և 1907 թ. Կոնվենցիայի՝ անկախ 2-րդ հոդվածով նախատեսված դիմումից՝ Ստորագրող տերությունները/Պայմանավորվող պետություններն առաջարկում են, որ վեճի մասնակից չհանդիսացող մեկ կամ մի քանի տերություն սեփական նախաձեռնությամբ, և որքանով թույլ են տալիս հանգամանքները, առաջարկեն իրենց բարի ծառայություններն ու միջնորդությունը վեճի մասնակից պետություններին:

Վեճի մասնակից չհանդիսացող տերություններն իրավունք ունեն առաջարկելու իրենց բարի ծառայություններն ու միջնորդությունը նույնիսկ ռազմական գործողությունների ընթացքում:

Միջնորդի խնդիրն է հաշտեցնել հակադիր պահանջները և նվազեցնել թշնամանքի զգացումը, եթե այն ծագել է վեճի մասնակից պետությունների միջև:

Միջնորդի գործառույթները դադարում են այն պահին, երբ վիճող կողմերից մեկը

կամ ինքը՝ միջնորդը, հայտարարում է, որ առաջարկվող հաշտության միջոցները չեն ընդունվում:

Համաձայն վերոհիշյալ Կոնվենցիաների՝ թե՛ կողմերի խնդրանքով, թե՛ վեճի կողմ չհանդիսացող տերությունների նախաձեռնությամբ կիրառվող բարի ծառայությունները և միջնորդությունն ունեն բացառապես խորհրդատվական բնույթ և ոչ մի դեպքում չունեն պարտադիր ուժ:

Կոնվենցիաներով սահմանվում է, որ միջնորդության ընդունումը, հակառակի վերաբերյալ համաձայնություն չլինելու դեպքում, չի կարող լինել զորահավաքի կամ պատերազմի պատրաստվելու այլ միջոցառումների ընդհատման, հետաձգման, դանդաղեցման կամ խոչընդոտման պատճառ, իսկ եթե միջնորդությունը տեղի է ունենում ռազմական գործողություններն սկսվելուց հետո, հակառակ համաձայնություն չլինելու դեպքում, այն չի հանգեցնում ընթացիկ ռազմական գործողությունների դադարեցման:

Կոնվենցիաներով նախատեսված կարգով, գործառույթներով և իրավասությամբ ստեղծվում են Մշտական արբիտրաժային տրիբունալ, Միջազգային քննիչ հանձնաժողով, Մշտական արբիտրաժային դատարան, Մշտական արբիտրաժային դատարանի Միջազգային բյուրո և Հատուկ տրիբունալ:

Միջազգային վեճերում, որոնք չեն առնչվում ո՛չ պատվին, ո՛չ էլ կենսական շահերին և բխում են փաստերի գնահատման շուրջ ունեցած տարակարծությունից, Կոնվենցիաների կողմերն առաջարկում են վեճերի կողմերին դիվանագիտական համաձայնության չհասնելու դեպքում այնքանով, որքանով թույլ են տալիս հանգամանքները, հիմնել Միջազգային քննիչ հանձնաժողով՝ անկողմնակալ և արդար քննության միջոցով փաստերի պարզաբանմամբ վեճերը լուծելու նպատակով:

Միջազգային քննիչ հանձնաժողովները ստեղծվում են վիճող կողմերի միջև կնքվող հատուկ համաձայնագրով՝ Կոնվենցիաներով սահմանված կարգով:

Հանձնաժողովի նիստերը հանրային չեն, և հրապարակման ենթակա չեն նաև Արձանագրություններին ու քննությանն առնչվող փաստաթղթերը, բացառությամբ կողմերի համաձայնությամբ Հանձնաժողովի կայացրած որոշման առկայության դեպքում:

Հանձնաժողովի զեկույցը ընթերցվում է դռնբաց նիստում ներկայացուցիչների և իրավախորհրդատուի ներկայությամբ կամ բացակայությամբ, եթե վերջիններս պատ-

շաճ ծանուցվել են: Հանձնաժողովի զեկույցն ունի բացառապես փաստերն արձանագրող բնույթ և ոչ մի պարագայում չի կարող համարվել Արբիտրաժային վճիռ: Կողմերը լիովին ազատ են ըստ իրենց հայեցողության տնօրինելու այդ փաստերը:

Դիվանագիտական ճանապարհով չկարգավորված միջազգային տարաձայնությունների դեպքում անհապաղ արբիտրաժի դիմելու հնարավորություն ստեղծելու համար Պայմանավորվող տերությունները պարտավորվում են հիմնել Մշտական արբիտրաժային դատարան, ինչպես սահմանվել է Առաջին խաղաղության համաժողովում, որը հասանելի կլինի ցանկացած ժամանակ և կգործի, եթե կողմերը 1907 թ. Կոնվենցիայի ընթացակարգային կանոնների համաձայն այլ բան չեն նախատեսում:

Մշտական դատարանն իրավասու է քննել բոլոր արբիտրաժային գործերը, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը համաձայնում են ստեղծել հատուկ Տրիբունալ:

Տրիբունալի խորհրդակցություններն անցկացվում են դռնփակ, իսկ ընթացակարգը գաղտնի է: Յուրաքանչյուր որոշում կայացվում է Տրիբունալի անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ Արբիտրաժային վճիռն ընթերցվում է դռնբաց նիստում կողմերի ներկայացուցիչների և իրավախորհրդատուների ներկայությամբ կամ բացակայությամբ, եթե վերջիններս պատշաճ ծանուցվել են: Արբիտրաժային վճիռը պարտադիր է միայն վիճող կողմերի համար:

2. 1899 թ. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլ պարտավորությունների, փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

2.1. պետությունների միջև հարաբերություններում ուժի կիրառումը հնարավորինս կանխելու նպատակով գործադրել Հայաստանի Հանրապետության լավագույն ջանքերը՝ ապահովելու միջազգային տարաձայնությունների խաղաղ լուծումը (1899 թ. Կոնվենցիա, հոդված 1),

2.2. լուրջ տարաձայնության կամ հակասության դեպքում՝ այնքանով, որքանով թույլ են տալիս հանգամանքները, համաձայնել զենք կիրառելու փոխարեն դիմել մեկ կամ մի քանի բարեկամ տերությունների բարի ծառայություններից կամ միջնորդությունից օգտվելու հնարավորությանը (1899 թ. Կոնվենցիա, հոդված 2),

2.3. Ստորագրող տերությունների՝ 1899 թ. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքի իրացումը չդիտարկել որպես ոչ բարեկամական գործողություն (1899 թ. Կոնվենցիա, հոդված 3, պարբերություն 3),

2.4. որպես վեճի մասնակից կողմ հանդես գալու պարագայում լուրջ տարաձայնության դեպքում, երբ վտանգված է խաղաղությունը, համապատասխանորեն ընտրել տերություն, որին կլիազորվի հակառակ կողմի ընտրած տերության հետ ուղիղ բանակցություններ վարելու առաքելությունը՝ խաղաղ հարաբերությունների խզումը կանխելու նպատակով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 8, պարբերություն 2),

2.5. մանդատի գործողության ժամանակահատվածում, որի ժամկետը, եթե այլ բան սահմանված չէ, չի կարող գերազանցել երեսուն օրը, որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ դադարեցնել վեճի առարկային առնչվող բոլոր ուղղակի հաղորդակցությունները վեճի մասնակից մյուս պետության հետ, որը համարվում է փոխանցված բացառապես միջնորդ տերություններին, որոնք պետք է գործադրեն լավագույն ջանքերը վեճի կարգավորման նպատակով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 8, պարբերություն 3),

2.6. որպես վեճի կողմ հանդես գալու պարագայում՝ Միջազգային քննիչ հանձնաժողովին հնարավորինս տրամադրել բոլոր այն միջոցներն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են փաստերին ամբողջովին ծանոթանալու և դրանք ճշգրիտ հասկանալու համար (1899 թ. Կոնվենցիա, հոդված 12),

2.7. ստորագրող կողմերի հետ կնքված արբիտրաժային ցանկացած համաձայնագրի, ինչպես նաև հատուկ Տրիբունալների կողմից կայացված ցանկացած Արբիտրաժային վճռի վավերացված օրինակները փոխանցել Միջազգային բյուրոյին՝ Հաագա, ինչպես նաև օրենքները, կարգավորումները և փաստաթղթերը, որոնք հավաստում են Դատարանի կողմից կայացված Արբիտրաժային վճիռների կատարումը (1899 թ. Կոնվենցիա, հոդված 22, պարբերություններ 3 և 4),

2.8. 1899 թ. Կոնվենցիայի վավերացումից հետո՝ երեք ամսվա ընթացքում, ընտրել ոչ ավել, քան չորս անձ, որոնք քաջատեղյակ են միջազգային իրավունքին, ունեն բարձր բարոյական համբավ և պատրաստակամ են ստանձնելու Արբիտրի պարտականությունները վեց տարի պաշտոնավարման ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 23, պարբերություններ 1 և 5),

2.9. Արբիտրաժային տրիբունալի կազմի՝ կողմերի ուղղակի համաձայնությամբ չորոշելու պարագայում առաջնորդվել 1899 թ. Կոնվենցիայի 24-րդ հոդվածով սահմանված կարգով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 24, պարբերություն 2),

2.10. հոգալ Բյուրոյի ծախսերը Համաշխարհային փոստային միության կողմից Միջազգային բյուրոյի համար սահմանված չափաբաժնով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 29),

2.11. Արբիտրաժի զարգացմանը նպաստելու նպատակով արբիտրաժի ընթացակարգի համար կիրառել 1899 թ. Կոնվենցիայի III գլխով սահմանված հետևյալ Կանոնները, եթե այլ Կանոնների կիրառման վերաբերյալ կողմերը համաձայնության չեն եկել (1899 թ. Կոնվենցիա, հոդված 30),

2.12. Արբիտրաժին դիմելու պարագայում՝ ստորագրել հատուկ ակտ («Փոխզիջում» [Compromis]), որը հստակ սահմանում է տարաձայնության առարկան, ինչպես նաև Արբիտրների լիազորությունների շրջանակը. այդ ակտը պարտավորեցնում է կողմերին հավատարմություն ցուցաբերել Արբիտրաժային վճռի նկատմամբ (1899 թ. Կոնվենցիա, հոդված 31),

2.13. վճարել Հայաստանի Հանրապետության ծախսերը և Տրիբունալի ծախսերի հավասար բաժինը (1899 թ. Կոնվենցիա, հոդված 57):

3. 1907թ. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլ պարտավորությունների, փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. պետությունների հարաբերություններում ուժի կիրառումը հնարավորինս կանխելու նպատակով գործադրել Հայաստանի Հանրապետության լավագույն ջանքերը՝ ապահովելու միջազգային տարաձայնությունների խաղաղ լուծումը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 1),

3.2. լուրջ տարաձայնության կամ վեճի դեպքում այնքանով, որքանով թույլ են տալիս հանգամանքները, զենքի դիմելու փոխարեն համաձայնել դիմել մեկ կամ մի քանի բարեկամ պետությունների բարի ծառայություններից կամ միջնորդությունից օգտվելու հնարավորությանը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 2),

3.3. Պայմանավորվող պետությունների՝ 1907 թ. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքի իրացումը չդիտարկել որպես ոչ բարեկամական գործողություն (1907 թ. Կոնվենցիա, հոդված 3, պարբերություն 3),

3.4. որպես վեճի մասնակից կողմ հանդես գալու պարագայում՝ լուրջ տարաձայնության դեպքում, երբ վտանգված է խաղաղությունը, համապատասխանաբար ընտրել տերություն, որին կլիազորվի հակառակ կողմի ընտրած տերության հետ ուղիղ բանակցություններ վարելու առաքելությունը՝ խաղաղ հարաբերությունների խզումը կանխելու նպատակով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 8, պարբերություն 2),

3.5. մանդատի գործողության ժամանակահատվածում, որի ժամկետը, եթե այլ բան սահմանված չէ, չի կարող գերազանցել երեսուն օրը, որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ դադարեցնել վեճի առարկային առնչվող բոլոր ուղղակի հաղորդակցությունները վեճի մասնակից մյուս պետության հետ, որը համարվում է փոխանցված բացառապես միջնորդ տերություններին, որոնք պետք է գործադրեն լավագույն ջանքերը վեճի կարգավորման նպատակով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 8, պարբերություն 3),

3.6. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ սահմանված ժամկետներում Հանձնաժողովին և հակառակ կողմին առկայության դեպքում ներկայացնել փաստերի շարադրանքը և ամեն դեպքում ակտերը, թղթերն ու փաստաթղթերը, որոնք Հայաստանի Հանրապետությունն անհրաժեշտ է համարում ճշմարտությունը պարզելու համար, ինչպես նաև վկաների ու փորձագետների ցանկը, որոնց ցուցմունքները ցանկանում է լսելի դարձնել (1907 թ. Կոնվենցիա, հոդված 19, պարբերություն 2),

3.7. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ Քննիչ հանձնաժողովին տրամադրել հնարավոր բոլոր այն միջոցներն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են փաստերին ամբողջությամբ ծանոթանալու և դրանք հասկանալու համար (1907 թ. Կոնվենցիա, հոդված 23, պարբերություն 1),

3.8. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ օգտագործել Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ եղած միջոցները, ըստ սեփական ներպետական իրավունքի, երաշխավորելու Հայաստանի Հանրապետության

տարածքում գտնվող և Հանձնաժողով հրավիրված վկաների կամ փորձագետների ներկայությունը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 23, պարբերություն 2),

3.9. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ վկաների կամ փորձագետների՝ Հանձնաժողով ներկայանալու հնարավորություն չունենալու դեպքում՝ կազմակերպել նրանց ցուցմունքների դեպոնացումը Հայաստանի Հանրապետության որակավորված պաշտոնյաների կողմից (1907 թ. Կոնվենցիա, հոդված 23, պարբերություն 3),

3.10. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ վճարել Հայաստանի Հանրապետության ծախսերը և Հանձնաժողովի ծախսերի հավասար բաժինը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 36),

3.11. իրավական բնույթի հարցերի, մասնավորապես՝ միջազգային կոնվենցիաների մեկնաբանման կամ կիրառման դեպքում ճանաչել Արբիտրաժն ամենաարդյունավետ և միևնույն ժամանակ ամենաանկողմնակալ միջոցը՝ լուծելու այն վեճերը, որոնք չի հաջողվել լուծել դիվանագիտական ճանապարհով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 38, պարբերություն 1),

3.12. առաջին իսկ հնարավորության դեպքում փոխանցել Բյուրոյին մյուս Պայմանավորվող տերությունների միջև կնքված արբիտրաժային ընթացակարգի պայմաններին վերաբերող ցանկացած համաձայնագրի, ինչպես նաև Հատուկ տրիբունալի կողմից կայացված Արբիտրաժային վճիռների վավերացված օրինակները, ինչպես նաև Բյուրոյին փոխանցել օրենքները, կարգավորումները և փաստաթղթերը, որոնք անհրաժեշտության դեպքում հավաստում են Դատարանի կողմից կայացված վճիռների կատարման մասին (1907 թ. Կոնվենցիա, հոդված 43, պարբերություններ 3 և 4),

3.13. ընտրել ոչ ավել, քան չորս անձ, որոնք քաջատեղյակ են միջազգային իրավունքին, ունեն բարձր բարոյական համբավ և պատրաստակամ են ստանձնելու Արբիտրի պարտականությունները (1907 թ. Կոնվենցիա, հոդված 44, պարբերություն 1),

3.14. Տրիբունալի կազմվելուց հետո ծանուցել Բյուրոյին դատարանին դիմելու Հայաստանի Հանրապետության որոշման մասին՝ ներկայացնելով «Փոխզիջում» [Compromis] և արբիտրների անունները (1907 թ. Կոնվենցիա, հոդված 46, պարբերություն 1),

3.15. հոգալ Բյուրոյի ծախսերը՝ Համաշխարհային փոստային միության կողմից Միջազգային բյուրոյի համար սահմանված չափաբաժնով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 50, պարբերություն 1),

3.16. Արբիտրաժի դիմելու իրավասություն ունենալու դեպքում՝ կնքել «Փոխզիջում», որով հստակ սահմանվում է վեճի առարկան, Արբիտրներ նշանակելու ժամկետները, ձևը, կարգը և ժամկետը, որի շրջանակներում պետք է տեղի ունենա 1907 թ. Կոնվենցիայի 63-րդ հոդվածով նախատեսված հաղորդակցությունը, ինչպես նաև նախապես վճարել գումարը՝ ծախսերը ծածկելու նպատակով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 52, պարբերություն 1),

3.17. Տրիբունալին տրամադրել գործի լուծման համար անհրաժեշտ տեղեկություններն այնքանով, որքանով դա հնարավոր է համարվում (1907 թ. Կոնվենցիա, հոդված 75),

3.18. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ վճարել Հայաստանի Հանրապետության ծախսերը և Տրիբունալի ծախսերի հավասար բաժինը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 85):

4. 1907 թ. Կոնվենցիայի 91-րդ հոդվածի համաձայն՝ նշված Կոնվենցիան, պատշաճ կերպով վավերացված լինելով, Պայմանավորվող տերությունների միջև հարաբերություններում կփոխարինի 1899 թվականի հուլիսի 29-ին կնքված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիային:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1764